Հաստատված է
ԳՊՀ գիտական խորհրդի
2020թ. մայիսի 18-ի թիվ 4 նիստում
Ռեկտոր՝ Ռ. Հակոբյան
«18» 05. 2020թ.

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ
2020-**2021 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ**
ԱՌՑԱՆՑ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱՐԳ

1. Գավառի պետական համալսարանի (այսուհետ՝ Համալսարան) մագիստրատուրայի 2020-2021 ուսումնական տարվա ընդունելությունը կազմակերպվում է ‹‹Գավառի պետական համալսարանում մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման կարգ››-ին համապատասխան, միաժամանակ, հիմք ընդունելով ‹‹Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին›› ՀՀ Կառավարության 2020 թվականի մարտի 16-ի թիվ 298-Ն որոշումը և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում կիրառվող ժամանակավոր սահմանափակումների մասին ՀՀ Պարետի 2020 թվականի մայիսի 3-ի թիվ 63 և 2020 թվականի մայիսի 14-ի թիվ 74 որոշումները՝ մագիստրատուրայի ընդունելությունն անցկացվում է առցանց:

2. Մագիստրատուրայի դիմորդները դիմում-հայտերը և սույն կարգի 3-րդ կետում նախատեսված փաստաթղթերի պատճենները ներկայացնում են էլեկտրոնային տարբերակով՝ ներբեռնելով Համալսարանի համացանցային /www.gsu.am/ կայքի գլխավոր էջի մագիստրատուրայի դիմորդների դիմումների առցանց ընդունման հարթակում:

3. Մագիստրատուրայի դիմորդները ներկայացնում են.

1) բակալավրի, դիպլոմավորված մասնագետի, մագիստրոսի դիպլոմի և դրա հավելվածի (միջուկի) լուսապատկերները (այսուհետ՝ պատճենները), իսկ օտարերկրյա պետություններում բարձրագույն կրթություն ստացածները՝ կրթության համարժեքության մասին փաստաթղթի պատճեն,

2) ինքնակենսագրություն և լուսանկար (3 x 4 չափի),

3) հրատարակված կամ հրատարակման ընդունված գիտական աշխատությունների ցուցակ (դրանց առկայության դեպքում),

4) անձը հաստատող փաստաթղթի պատճեն,

5) զինծառայության առնչության վերաբերյալ փաստաթղթի պատճեն (արական սեռի դիմորդների դեպքում),

6) երաշխավորագիր ֆակուլտետի խորհրդից (նախորդ տարիների շրջանավարտները երաշխավորագիր չեն ներկայացնում),

7) ՀՀ օրենսդրությամբ սահմանված հատուկ արտոնություններից օգտվելու մասին փաստաթղթի պատճեն (առկայության դեպքում),

8) ընդունելության ծառայությունների համար սահմանված վճարի անդորրագիր:

4. Մագիստրատուրայի առցանց ընդունելությունն անցկացվում է 2 փուլով: Առաջին փուլով մագիստրատուրայի առցանց ընդունելությունն ըստ մասնագիտությունների անցկացվում է 2020 թ. հունիսի 8-ից մինչև հուլիսի 4-ը՝ ներառյալ, ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերի:

5. Երկրորդ փուլով մագիստրատուրայի առցանց ընդունելությունն անցկացվում է մինչև 2020թ. սեպտեմբերի 1-ը, ըստ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից հաստատված ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման (վճարովի) տեղերի:

6. Մագիստրատուրայի ընդունելության մրցույթն անցկացվում է հետևյալ չափանիշների առաջնահերթությամբ.

1) նախորդ ուսումնառության ծրագրում ցուցաբերած ընդհանուր առաջադիմության գումարային միջին գնահատականով կամ միջին որակական գնահատականով,

2) մասնագիտական առարկաներից ցուցաբերած առաջադիմության գումարային միջին գնահատականով կամ միջին որակական գնահատականով,

3) տպագրված կամ տպագրման ընդունված գիտական աշխատությունների, թեզիսների և զեկուցումների առկայությունը, դրանց թիվը,

4) ոչ մասնագիտական առարկաներից ցուցաբերած առաջադիմության գումարային միջին գնահատականով կամ միջին որակական գնահատականով:

7. Մագիստրատուրայի ընդունելությունն անցկացվում է մանդատային հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) առցանց նիստում՝ հանձնաժողովի կազմի երկու երրորդից ոչ պակաս անդամների ներկայության դեպքում:

8. Հանձնաժողովը մագիստրատուրայի առցանց ընդունելությունը կազմակերպում է հետևյալ կարգով.

1) դիմորդներին հնարավորություն է տրվում հերթականությամբ հանձնելու մեկ համալիր քննություն՝ ընտրած մասնագիտությունից, նախատեսված ժամին միանալով հանձնաժողովին՝ ‹‹ԶՈՒՄ›› ծրագրով, նախապես տրամադրված մուտքաբառով և գաղտնաբառով,

2) դիմորդը պարտավոր է ունենալ իր անուն ազգանունով ‹‹ԶՈՒՄ›› համացանցային ծրագրով ներբեռնված համակարգիչ, անխափան և որակյալ համացանցային կապ,

3) դիմորդը տեսանելի ձևով հանձնաժողովին ցուցադրում է իր անձնագիրը,
4) ընդունելության քննության ընթացքում դիմորդը պարտավոր է պահպանել ակադեմիական ազնվությունը:

9. Դիմորդը հանձնաժողովի առաջարկով հնչեցնում է իր նախընտրած տոմսի համարը, և հանձնաժողովի քարտուղարը ընտրված տոմսը ցուցադրում է էկրանին:

10. Դիմորդին պատրաստվելու համար հատկացվում է 20 րոպե ժամանակ: Հիմնական հարցերին պատասխանելուց հետո դիմորդին հանձնաժողովի կողմից կարող են տրվել լրացուցիչ հարցեր:

11. Սույն կանոնակարգի 8-րդ կետով սահմանված կանոններից առնվազն մեկի խախտման դեպքում քննությունը դադարեցվում է, և դիմորդը համարվում է չընդունված՝ անկախ նախօրոք տրված պատասխանի բովանդակությունից և ծավալից:

12. Ընդունելության քննության ամբողջ ընթացքը տեսաձայնագրվում է:

13. Ընդունելությունը կատարվում է հանձնաժողովի առցանց նիստին մասնակցող անդամների քվեարկության արդյունքում:

14. Ընդունելության արդյունքներն արձանագրվում են մագիստրատուրայի ընդունելության մատյանում, ստորագրվում հանձնաժողովի նախագահի ու առցանց ընդունելությանը մասնակցած անդամների կողմից և կնքվում:

15. Մագիստրատուրա ընդունված անձինք սույն կարգի 3-րդ կետում նշված փաստաթղթերի բնօրինակները /կամ պատճենները՝ լուսապատկերների փոխարեն/ ներկայացնում են Համալսարան՝ անձնական գործում պահելու նպատակով:

16. Մագիստրատուրա ընդունված անձը ներկայացվում է հրամանագրման, և Համալսարանի ու նրա միջև կնքվում է պայմանագիր: